
«ԱԶԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ (1910-1913)

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մ. Վ.

«Ազատամարտ» օրաթերթը հրատարակության տարիներին (1909-1915 թթ.) գրեթե բոլոր համարներում լուսաբանել է հայկական և համաշխարհային մշակութային անցուդարձը: Թերթի էջերում իրենց ստեղծագործություններով հանդես են եկել ոչ միայն արևմտահայ ու արևելահայ, այլև օտարազգի գրողներն ու արվեստագետները: Օրաթերթի գրական-մշակութային ուղղվածությամբ նյութերն ու քաղաքականությունն առանձին և ամբողջական գիտական լուրջ ուսումնասիրության կարիք ունեն, ինչը մեր այս հոդվածի շրջանակից դուրս է: Միայն փաստենք մի շարք էական առանձնահատկություններ «Ազատամարտի» գրական-մշակութային մոտեցումների վերաբերյալ:

Օրաթերթը հատկապես գրական-մշակութային ոլորտի անդրադարձներով է զերծ մնացել նեղ-կուսակցական թերթերին բնորոշ հատկանիշներից: Մշակութային ուղղվածությամբ նյութերով, վերլուծական հոդվածներով և ուսումնասիրություններով հարուստ են «Ազատամարտի» տարեմտի կամ Կադանդի առիթով հրատարակված բացառիկ համարները, որոնք լույս են տեսել 4-ի փոխարեն 8 էջով: Թերթի պատասխանատու խմբագիր Հ. Սիրունին գրում էր, որ «Ազատամարտը» ցանկանում էր դառնալ գրական օջախ. «Ան համախմբեց մեր գրականության լավագույն դեմքերը, նույնիսկ անոնք, որ Դաշնակցության բարեկամներ չէին... Միայն ականավորները չէին, որ մեր երիտասարդությունը կը ճանչնար. կովկասյան շա'տ-շա'տ երկրորդական գրողներ իսկ ծանոթ էին ամենուն»¹: «Ազատամարտը» փորձել է կամրջել պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդի միմյանցից զատված հատվածների գրականության և արվեստի աշխարհի ներկայացուցիչներին: Օրաթերթում տպագրվել են Ռաֆֆու, Ավ. Ահարոնյանի, Ալ. Շիրվանզադեի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Հ. Օշականի, Կ. Ջառյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Գ. Ջոհրապի, Ռ. Ջադարյանի, Զ. Եսայանի, Հ. Նազարյանցի և այլոց գրական չափածո և արձակ երկերը:

«Ազատամարտը» քաղաքական գործունի համարժեք է համարել արվեստի և մշակույթի դաստիարակիչ դերը ժողովրդի կյանքում: Այդ հանգամանքով է պատճառաբանվում մշակութային ոլորտի լուսաբանման՝ օրաթերթի որդեգրած ուղեգիծը: «Ազատամարտը» մշտապես ուշադրության կենտրոնում է պահել արվեստի բնագավառի հիմնախնդիրները, կատարվող տեղաշարժերը, գրական ու մշակութային այլ կարգի քննարկումները, բանավեճերը և ասուլիսները: Այս տեսակետից «Ազատամարտը» կարելի է համարել ժամանակի արևմտահայ մշակութային կյանքի յուրատեսակ հանրագիտարան: Ընդ որում, թերթն ապահովել է բազմակարծություն բանավիճային

¹ *Հայրենիք, ամսագիր, Բոստոն, 1924, N 11, էջ 104-115:*

հարցերում: Կարելի է հիշատակել 1913 թ. արևմտահայ իրականության մեջ ծավալված բուռն քննարկումները հայ գրականության զարգացման ուղիների և գրական ոճերի ընտրության առումով: Կազմակերպված գրական ասուլիսներն անդրադարձ են գտել 1913 թ. «Ազատամարտի» վերլուծական հոդվածների, լուրերի և զրբախոսականների բաժիններում:

«Ազատամարտի» կարծիքով, քննադատները մեծ դեր ունեին արվեստի ու գրականության զարգացման գործում: Օրաթերթը կարևորել է գրականության և արվեստի վերափոխիչ ու կրթադաստիարակչական գործառնությունները: Պարբերականը 1910 թ. հուլիսի 10-ից սկսել է հրատարակել «Ազատամարտ» գրական, գիտական և գեղարվեստական շաբաթաթերթ-հավելվածը, որ լույս է տեսել մինչև 1913 թ. սկզբները: 1911-1912 թթ. հավելվածը տպագրվել է «Բագին» և «Բամբին» անուններով: Լույս է տեսել «Ազատամարտի» գրական հավելվածի 73 համար: Հավելվածի խմբագրման գործը փոխնիփոխ վարել են Ռ. Զարդարյանը, Ռ. Դարբինյանը և Շ. Միսաքյանը: 1911 թ. դեկտեմբերի 13-ի խմբագրականում նշվում էր, որ հավելվածի հրատարակությունից հետո անցել է շուրջ մեկ տարի, և այդ ընթացքում ամսագիրը կարողացել է ստեղծել արտահաստիքային աշխատակիցների և ընթերցողների լայն ցանց: Այն «Եվրոպայի գլխավոր մտավորական կեդրոններում մեջ ուներ իր մասնավոր թղթակիցները»²: Խմբագրակազմը հույս էր հայտնում, որ ամսագիրը «գրական պաշտամունքի և փառաբանության ճշմարիտ և կենդանի տաճարը պիտի ըլլա մեր մտքի ու խոստովանություն»³:

1910 թ. հուլիսի 10-ին «Ազատամարտի» գրական հավելվածի առաջին խմբագրականում Ռ. Զարդարյանը գրում էր, թե հասել է գրական հերկի ժամանակը. «Այս հավելվածը ուրիշ բան չէ՝ եթե ոչ նախաքայլ մը դեպի գրական նոր աշխատանքը, որուն համար իրենց գործակցությունը պիտի բերեն արևմտյան և արևելյան Հայերու հայտնի գրողներեն մեծ մաս մը, ինչպես նաև նորահաս սերունդի բոլոր լավագույն ներկայացուցիչները: Ձեռնարկը...նպատակ ունի միևնույն ատեն արձագանքը բերել հայ կյանքին մեջ օտար իմացական շարժումներուն, ծանոթացնելով ինչ որ Արվեստն ու Գիտությունը կ'ավելցնեն համաշխարհային քաղաքակրթության և ընկերական հառաջդիմության ի նպաստ: Իսկ Արվեստն ու Գիտությունը կոչված են դառնալու ապագայի միակ բարձրագույն կրոնքը»⁴: Գրական հավելվածի խմբագրակազմը լիովին ի կատար է ածել իր առջև դրած նպատակները: Հրատարակության մոտ երկու և կես տարիների ընթացքում ամսագրում տպագրվել են Ավ. Իսահակյանի «Հայրենի օջախ», «Բողոքի խան», «Բուդդիան», «Շաքրո Վալիշվիլի», «Հավիտենական սեր» և այլ ստեղծագործությունները, Վրթ. Փա-

² *Ազատամարտ, շաբաթաթերթ (ամսագիր), 1911, N 1, էջ 1:*

³ *Նույն տեղում:*

⁴ *Նույն տեղում, 1910, N 1, էջ 1:*

փագյանի գրական գրույցները, Գ. Բարսեղյանի թարգմանությամբ, ֆրանսերենով՝ Կ. Զարյանի գրույցները, Լ. Շանթի «Կինը» վիպակը, Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Ե. Տեմիրճիպաշյանի, Հ. Նազարյանցի, Լ. Էսաճանյանի և այլոց բանաստեղծությունները, Զ. Եսայանի էսսեները, Հ. Օշականի նովելները և այլն:

Օտարագրի գրողներից ամսագրի «Օտար էջեր» բաժնում զետեղված են Լ. Տոլստոյի արձակ երկերից, իտալացի բանաստեղծներ Զան Պիետրո Լուչինիի, Պաոլո Փուձիի և Էնրիկո Կարտիլեի, բելգիացի բանաստեղծ Ֆրանսուա Լեոնայի, ֆրանսիացի բանաստեղծ Պիեռ Քիյարի և այլոց բանաստեղծությունները: «Ազատամարտ» գրական ամսագրի «Էջեր թուրք նոր գրականութենեն» խորագրի ներքո տրպագրված են թուրք ժամանակակից գրողների ստեղծագործություններից: Խմբագրությունը թուրք նոր գրականության «երեց դեմքերեն մեկն» է համարել Ուշագը Զատե Խալիտ Զիա բեյին՝ թարգմանաբար տպագրելով նրա «Մեզարտան Սեալեր» գրքից «Զայներ գերեզմանեն» պատմվածքը⁵:

«Ազատամարտի» գրական հավելվածի «Միտք և արվեստ» բաժնում նորատիպ գրքերի ու ստեղծագործությունների մասին վերլուծական հոդվածներով հանդես են եկել թե՛ ամսագրի աշխատակիցները, թե՛ հայ և օտարագրի գրողներն ու գրաքննադատները: Նրանցից շատերն ամսագրի էջերում իրենց տեսակետներն ու մոտեցումներն են արտահայտել արվեստի ու գիտության տարբեր բնագավառների և ճյուղերի, այդ թվում՝ գրականության դերի և տարաբնույթ խնդիրների մասին: Ռուսական և եվրոպական գրական ամսագրերից ու թերթերից այստեղ թարգմանաբար տպագրվել են նշված ոլորտների վերաբերյալ վերլուծականներ: Դրանք առավել հաճախ ամփոփվում էին նաև «Մտավորական շարժում» բաժնում և ամսագրի խմբագրությանն ուղարկված նամակների մեջ: Բնորոշ են «Բագինում» 1912 թ. հունվարի 12-ին Ս. Պետերբուրգի «Ռեչ»⁶ թերթից թարգմանաբար արտատպված Ն. Դուբրովսկու «Ճապոնական բանաստեղծությունը» հոդվածը և Փարիզից ստացված Հ.Ա.-ի «Ռոդենական թանգարան» թղթակցությունը⁶, Լ. Տոլստոյի գեղարվեստական անտիպ երկերի 2-րդ հատորի հրատարակության առիթով ամսագրի անդրադարձը⁷, Փարիզից Հր. Ալյանաքի ուղարկած «Ռոդենը և իր գործը» վերլուծական հոդվածաշարը⁸, նորվեգացի բանաստեղծ Պիեռ Բյորնսոնի կյանքին ու գրական գործունեությանը նվիրված Ինգա Նալբանդյանի հոդվածաշարը⁹, «Լեհ գրականությունը» անստորագիր հոդվածը¹⁰ և այլն: «Մտավորական շարժում» բաժնում թարգմանաբար արտատպված նյութերից հիշատակենք "Comedia" հանդեսում տպագրված հարցազրույցը Ա. Ֆրանսի հետ՝ ժամանակի ֆրանսիական թատրոնի և ֆրանսիացի թատերգուների

⁵ Նույն տեղում, 1910, N 7, էջ 11:

⁶ Բագին, ամսագիր, 1912, N 4, էջ 12-15:

⁷ Ազատամարտ, ամսագիր, 1911, N 1, էջ 24:

⁸ Բագին, 1912, N 6, էջ 13-15, 1912, N 7, էջ 13-15:

⁹ Ազատամարտ, ամսագիր, 1910, N 2-N 5:

¹⁰ Նույն տեղում, 1910, N 6, էջ 12-14:

մասին¹¹, «Արդի թատրոնը և իր դերը» հոդվածը՝ թարգմանված բելգիական «La Societe Nouvelle» հանդեսից¹²: Այստեղ ամփոփված էին ամսագրի՝ հանրահայտ մտավորականների շրջանում անցկացրած հարցման արդյունքները: Այդ հարցմանը մասնակցել էր նաև Կ. Զարյանը: Նրա կարծիքով, թատրոնը «մեծապես ետ մնացած է բաղդատմամբ արվեստի մյուս բոլոր ճյուղերում և սրընթաց և հաղթական գնացքին: Ժամանակակից թատրոնը չի համապատասխաներ այն էական նպատակներում գորս պարտի հետապնդել: Արուեստի տեսակետով թատրոնը հետամնաց է և պահպանողական»¹³: Կ. Զարյանն առաջարկել է թատերական գործի բարելավման ճանապարհը. «Այն օրը, որ թատրոնը դրամի լուծեն ազատված հաստատություն մը դառնա, այդ օրը իր հաղթանակի օրը պիտի կազմե և իր ընկերային դերը կատարյալ և արդյունավոր պիտի ըլլա»¹⁴: Տեղին է մեջբերել արևմտահայ թատրոնի առաջընթացի մասին «Ազատամարտ» գրական ամսագրի մոտեցումը: «Մեր թատրոնը» խմբագրականում թատրոնը համարվում էր ժողովրդի գեղարվեստական դաստիարակության կարևոր միջոց, իսկ թատրոնի զարգացման նոր շրջանի սկիզբ կարող էր լինել արևմտահայ իրականության մեջ թատերական ընկերության հիմնումը¹⁵: Ամսագրի «Միտք և արվեստ» ու «Արձագանքներ» բաժիններում տպագրել են արտերկրի գրական-մշակութային, գիտության տարբեր ոլորտներին առնչվող ու խմբագրակազմի կարծիքով հետաքրքիր և ուսանելի լուրեր: Այդ լրահոսն, օրինակ՝ ընթերցողներին հայտնում էր ֆրանսիացի բանաստեղծ, հայ դատի պաշտպան Պիեռ Քիյարի մահվան գույժը¹⁶: Կամ տեղեկացնում էր, որ 1911 թ. հունվարի 14-ին Փարիզում տեղի էր ունենալու Պոլ Վերլենի մահվան տարելիցին նվիրված միջոցառում¹⁷:

Ուշագրավ են ամսագրում ծավալված քննարկումները արևմտահայ գրականության ընթացիկ վիճակի, գրական խմորումների և ուղղությունների, գրականության զարգացման ուղիների վերաբերյալ: Արսեն Նաբաթյանի «Կյանք և գրականություն» հոդվածում արձանագրվում են արևմտահայ գրական շրջանակներում նկատվող «կարգ մը ցավալի կողմեր»¹⁸: Նրան մտահոգում էր ընթերցողների ցածր ճաշակը, ինչի պատճառով բանաստեղծ կամ գրող համարվելու համար բավական էր «քանի մը ոտանավոր թխել կամ հոդվածներ գրել կամ քանի մը վիպակներ կազմել»¹⁹: Գեղարվեստական ու հասարակական առողջ քննադատության բացակայությունը հանգեցրել էր այն բանին, որ գրական հսկաների կողքին հաճախ փառաբանվում էին զաճաճները՝ ստեղծելով ազգային «պատկառելի գրա-

¹¹ Նույն տեղում, 1910, N 3, էջ 7-9:

¹² Նույն տեղում, 1910, N 5, էջ 15-16:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, 1910, N 6, էջ 1:

¹⁶ Բազին, 1912, N 6, էջ 16:

¹⁷ Ազատամարտ, ամսագիր, 1911, N 3, էջ 16:

¹⁸ Նույն տեղում, 1910, N 7, էջ 15-16:

¹⁹ Նույն տեղում:

կանության մը պատրանք»²⁰: Շատերն էին համակված գրելացավով, քանի որ գրելը ոչ միայն փառքի ճանապարհ էր, այլև՝ դրամ, պաշտոն ու տաքուկ տեղեր ձեռք բերելու միջոց²¹: Հայ գրական անդաստանում արմատավորված այս բացասական երևույթներից ձերբագատվելու համար Ռ. Զարդարյանը «Նորահաս բանաստեղծներ» վերլուծականում առաջարկում էր, որ «քերթողության Տաճարին նախագավիթը» հսկող պահապանը հարցներ ներս մտնել ցանկացողներին. «Ի՞նչ կը բերես հասարակաց բուրաստանին՝ որ ըլլա քուկդ, բոլորովին տարբեր ուրիշներեն, իր մասնավոր հատկանիշովն ու առանձին նկարագրովը»²²: Իսկ Շ. Միսաքյանն արևմտահայ գրականության առաջընթացի համար, «որ ի լինելության էր», հրամայական պահաջ էր համարում անմիջական առաջադեմ հարևանների գրական մարզանքների հետագոտումը՝ առանց դրանց կրկնօրինակման փորձերի²³: Ռ. Զարդարյանը կարծում էր, որ անհրաժեշտ է զարգացնել ազգային գրականությունը: Այն պիտի «ընդգրկեր հայ ժողովուրդին բոլոր դասակարգերը՝ ու մանավանդ անոր մեծագույն զանգվածը, գյուղացին, աշխատավորը, բուն ազգը՝ իր ալեկոծումներով և իր մտերմիկ հույզերով, իր հույսերով ու հուսավրիպումներով, իր երկյուղած համակերպությամբ և զարհուրելի ճակտագրապաշտությամբ», - գրում էր նա և նշում, թե հայ գրականության վերածննդի համար անհրաժեշտ է ուսումնասիրել այդ անկոխ գետինը՝ հայ գյուղը²⁴:

ЛИТЕРАТУРНОЕ ПРИЛОЖЕНИЕ ГАЗЕТЫ “АЗАТАМАРТ” (1910-1913)

ОВСЕПЯН М. В.

Резюме

В 1910-1913 гг. на страницах литературного приложения газеты “Азатамарт” издавались произведения армянских и иностранных писателей и критиков того времени. Журнал был рупором их творческих идей и литературных взглядов. В литературном приложении “Азатамарта” печатались аналитические статьи, посвященные также искусству перевода. Привлекают внимание разв, рнутые на страницах журнала диспуты о западноармянской литературе, о направлениях и путях развития литературы. Кроме аналитических материалов в отделах журнала “Мысль и искусство” и “Эхо” издавались материалы по разным сферам науки и искусства.

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում, 1910, N 2, էջ 1:

²³ Նույն տեղում, 1910, N 12, էջ 1-2:

²⁴ Նույն տեղում: